



Ալվարդ Հակոբի Ջիվանյան (ծնվ. 1964, Գյումրիում),
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ անգլիական
բանասիրության ամբիոնի պրոֆեսոր:

1990-ին Մոսկվայի լեզվաբանական համալսարանում պաշտպանել է
թեկնածուական ատենախոսություն «Անգլիական գրական նոնսենսի
առանձնահատկությունները» թեմայով: 2009-ին Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն
«Հայ հրաշապատում հեքիաթի պոետիկական» թեմայով:

Գրել է հեքիաթին և մանկական գրականությանը նվիրված մի քանի
մենագրություն /«Հմայված հոգիների պարտեզում. մանկական գրականության
տեսության հարցեր», «Հրաշապատում հեքիաթը որպես արքիտեքստ»,
«Հրաշապատում հեքիաթի լեզվառճական փոխակերպումները» և այլն»/
«Մարգարիտներ հայ թարգմանական հեքիաթագրության» մատենաշարի
գիտական պատասխանատուն և տեսական մեկնությունների հեղինակն է:
Հոդվածներ է հրատարակել Երևանում, Մոսկվայում, Լոնդոնում, Էդինբուրգում,
Բեյրութում, Վաշինգտոնում, Տարտուում:

Կազմել և խմբագրել է «Իռլանդիա և Հայաստան, լեզվաբանական,
պատմական և տեքստաբանական ուսումնասիրություններ» (Ireland and Armenia:
Studies in Language, History and Narrative. Journal of Indo-European Studies,
Monograph Series 61, Washington D. C., 2012) ժողովածուն:

2009-ից Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժնի
ղեկավարն է, «Ոսկե դիվան. հեքիաթագիտական հանդեսի» և «Հասկեր. մանկական

գրականության և բանահյուսության տարեգրքի» խմբագիրը: «Ջանգակ» հրատարակչության մանկական գրականության բաժնի խմբագիրն է:

Թարգմանել է Ջ.Մ. Բարրիի «Փիթր Փենը Քենսինգթոնի այգիներում», «Փիթրը և Վենդին», Ֆ.Հ. Բրնեթի «Փոքրիկ արքայադուստրը», «Խորհրդավոր պարտեզը», Ա. Միլնի «Վինի Փու արջուկը», «Փու արջուկը տուն է կառուցում», Փ. Թրևերսի «Մերի Փոփինս» վեպերը, Ջ. Բ. Ռոուլինգի հարրիփոթերյան վիպաշարի հինգ գրքերը: